

այդ խնդրոյն մէջ, հետեւարար և տարբեր անհիւններէ կատարաւած ու է նկատողութիւն անհիմն է և անձիչդ:

\*

Զարմանք միայն կը զգանք տեսնելով որ Պարնիկեանի առաքելութեան հարցը տակաւին կը թուի զրադշեցնել Հանրային կարծիքը, մինչ այդ խնդիրը վերջնապէ փակուած պէտք է ըւլար օնրիմեան ծեմարանը Հոյակառ տիազուին ներքեւ քանի մը, այսինքն հինգ կամ վեց, արդարներ հաւաքիլու միայն յանդամ փաքիկ ձեռնարկին ծանօթ պայմաններու մէջ վերջանալէն հարցը — Հրազդակաւ պատասխանած ըլլալու համար նոյն ատեն լեփուիւսի առաքելութեան կողմէ Ս. Աթոռիս և զրկուած լըջաբերական հարցումին, ի դէպ կը նկատենք յայտարարել թէ Երուսաղէմի պատրիարքութիւնը ոչ մէջ յարաբերութիւն ունի Պարնիկեանի ներկայացուած այդ Գերման-Հայ առաքելութեան դորձին հետ, և ոչ ալ ո և է յանձնառութիւն՝ անոր հանգէտ: Ս. Պատրիարքը, Եգիպտոսի առաջնորդ եղած միջօցին, գեր երկու տարի առաջ, Երուսաղիմ մէջ հայ Եկեղեցական կրթութեան կայանի մը գոյութեան իրձէն ոգեհորդու, պահ մը շշիման մէջ մտած էր արքարք. Պարնիկեանի հետ, բայց, յետ տեսակցութեանց և բանակցութեանց, այդ գործին մտան իր համազումը վերջնապէս կազմեէ ետքը, խած է ամէն յարաբերութիւն՝ անոր հետ կազ ունեցող որ եւ է անձի հետ, և չի կարծեր որ մեր Եկեղեցւոյ նույիրազետական Աթոռներէն ու է մին պիտի ուղեկը քաջակերել այդ ձեռնարկը:

\*

Պարկեշտ, ազնիւ և խզամիտ դաստիարակի և ուսուցչի ամենէն մաքուր տիպարներէն մին եղած է մեր մէջ զ. Ալբովիք Գետրոսիան, որուն յիստամեայ կրթական գործունէութեան յորեւեանը պիտի տոնուի ամսոյն 15 ին, Աղեքանդրիոս մէջ: Իր աշակերտները, որոնցմէ վերապրուներն իսկ հարիւններով կը հաշուուին զեռ այսօր, վստահ նոր թէ այդ օրը ճշմարիտ գործվուի և անվերապահ երախտագիտութեամբ պիտի յիշեն զինքը:

Իր ամբողջ գործունէութեան ընթացքին, որ կէս դարէն ալ քանի մը տարիներ աւելի տեսած է ցայտար. իր միակ նշանարանն է եղած անհամանն և անխօնն նույիրումի սկզբունքը: Իր սաներուն տուած է անիկա միշտ իր ունեցածէն ալ աւելին, ու մուտերականին հետ, ու նոյն իսկ աւելի, բարոյականն է եղած իր ուսուցումին մեթսորւ իր աշակերտները ամէն բանէ աւելի իր հոգիին այսինքն նկարագրին վրայ է որ հրացած են անոր մէջ: Կատարելապէս արժանի է ան յարգալից սիրոյ այն արտայալութիւններուն, որոնցմով յարելինական տօնը պիտի պատկէ իր ալեղարդ և ամբիծ ճակատը:

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Երևաղեմի Պատրիարք

Ամենապահի

Տ. Թուրզու Արքայի կողովում

Ազգային Եկեղեցական ժողովը, որ գումարեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի ներկայութեան 80 ձայնի իրաւունքով 72 հոգիորական և աշխարհական պատգամաւորաց տարւոյս նոյնմբերի 10-12 ը,

1. Իր ամսիս 12 ի նիստում Մայր Տաճարի մէջ ընտրեց Տեղակալ Տ. Խորէն Արքապիսկոպոսին յաջորդ Ս. Լուսաւորչի Աթոռին, որ ըստ խնդրոյ ժողովոյն, ընդունեց հայրապետական օծումն նոյնմբերի 13 ին:

2. Ամսիս 10-11 ի իր նիստին մէջ լըսելուց զինի Գերագոյն Հ. Խորէրդի կործունէութեան, Հայաստանի նայեցույթի բարեկարգութեան սահմանագրութեան եւ Մայր Աթոռի նիւթական անձուկ վիճակի մասին Գերագոյն Հոգեկոր Խորէրդի զեկոյցները, որոշեց Ս. Զգուշաւոր վերաբնութեան և նթարկել առաջին երկու խնդիրները Տ. Կաթուղիկոսի Տաճան Կիլիկիոյ, Երևաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքութեանց, առաջնորդութեանց և ազգային հոգեկոր այլ հաստատութեանց մասնակցութեամբ և ապա միայն յաջորդ ընդհանուր ժողովի վերահսուութեան ուղարկել: Բ. մեր եկեղեցոյ բոլոր և առանձնապէս արտասահմանեան թիւմբերի ուշագրութեան և հոգացողութեան յանձնել Մայր Աթոռի նիւթական պահպանութեան գործը:

3. Հայրապետական ընտրութիւնից յետոյ, նոյն նիստում ժողովը Գերագոյն Հոգեկոր Խորէրդի կազմը սահմանեց վեց հոգուց, 4 ը հոգեկորական և 2 ը աշխարհական: Ժողովի ընտրութեամբ անդամակցութեան կոչուցուցան Տ. Գարեգին Արքապիսկոպոս Յովակիկիան, Տ. Գէորգ Արքապիսկոպոս Զէօրէքչիան, Տ. Արտակ Եպիսկոպոս Մարտահան և Տ. Արսէն Եպիսկոպոս Դատճան: Պարերաբար հրուիրուելու ին յանդամակցութիւն խորէրդի հայրապետական ընտրութեան ժողովի աշ-

խարհական պատգամաւորների ցանկից երկու անձն:

Գերազոյն Հոգևոր Խորհուրդը հաղորդելով այս մտածին Զերդ Ամենապատռութեան, նուև յարակցում է, որ ժողովի ընթացքի և հայրապետական ընտրութեան լրիւ տեղեկագիրը կ'ուղարկուի Զեղ իր ժամանակին:

Անդամ Գեր. Հոգ. Խորհրդի՝

Աղջունիւ եղբայրական սիրոյ  
Խ. աղօթակից՝

Արակ Սակ. Պատճեան

Քարտուղար՝ Յ. Քոչարեան

### Ամենապատիւ

Տ. Տ. Թուրզով Մրբազան Արքեպիսկոպոս  
Պատրիարք Ա. Երուաղիմի  
եւ

Պատուարժան Անդամ

Պաղեստինի Հայ Հասարակութեան  
Ա. Երուաղիմ

Հանդիստ ճամբարդութեամբ Նոյեմ. 7ին Երեան հասայ, և Նոյեմ. 10ին սկսող եկեղեցական Համագումարի ժողովներուն ներկայ եղայ: Նոյեմ. 12ին Երուաղիմի Պատրիարքութեան տուած հեռագրովս հաղորդած էի թէ Տ. Տ. Խորէն Մրբազան Արքեպիսկոպոս Ամենայն Հայոց Մայրաքոյն Պատրիարք և Կաթողիկոս ընտրուած է եւ յաջորդ օրը օծումը պիտի տեղի ունենայ:

Նոյեմ. 13ին Կիրտկի օրը Կաթողիկոսական տուածին պատարագը եւ օծումը տեղի ունեցաւ բարեպաշտ ժողովուրդի մեջ բազմութեան ներկայութեամբ:

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը պատուիրակներու ճամբարդութեան արտօնութեան և զիւրութեան համար ամէն ջանք ըրած էր, և պատուիրակներու հանդիսին և սնունդին համար թէ նիւթեապէս և թէ լաւագոյն տեսակ պարէններով վանքին օժանդակած էր. պատուիրակները ամէն կերպ ազատութիւն կը վայելէին, ամէն կերպով չնորհաւորելի է Հայ-Կառավարութիւնը, որուն համար Համագումարը գրաւոր ներկայացուց իր չնորհակալութեան ուղերձը:

Արտասահմանէն մինակ 2 կրօնական

և 5 աշխարհական պատուիրակ հասած էին:

Դժուար է հոս ժողովին բոլոր մանրամասնութիւնները յառաջ բերել այս երկատող զրութեամբ: Հոգևոր Գերազոյն նորընտելի խորհուրդը կո՞մ Արարատի բացառիկ թիւով մը եւ կամ արտասահմաննեան թերթի մը միջոցաւ հրատարակութեան պիտի տայ այդ ամէնը:

Մեծ էր փափաքս Հայաստանը տեսնելու, Պաղեստինի ժողովուրդին ինձ վըստահած պատուաբեր պաշտօնը պատճառ եւ դաւ փափաքիս համակալու որուն համար երախտապարտ եմ:

Հայաստանը արդիւնաբերական և շինարարական աշխատութեան լծուած է: Երեանը նոր չէնքերով անձանաչելի դարձած է: Հայաստանի մէջ աշխատօղ բազուկներու և մասնագէտ արհեստաւորներու միշտ պէտք կայ:

Ինձի համար ցանկովի էր տեսնել բովանդակ Հայաստանը ինչ որ հնարաւոր չեղաւ, Հայաստանի խիստ ձմեռը այս տարի կանուխ սկսելուն պատճառաւ: Որչով որ ալ Հայ-Կառավարութենէն արտօնութիւն ունեցայ աւելի մեալու, բայց առողջութիւնս կատարեալ չըլլալուն ստիպուեցայ շուտով մեկնելու:

Կրկին յայտնելով չնորհակալութիւնս Պաղեստինի Հայ ժողովուրդին.

Մնամ յարգանօք  
Պատգամաւոր Պաղեստինի  
Թ. Ծառամանիսան

### Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

ՎԵՃԱՇՆՈՐՀ Տ. ԲԱՐԳԻԿՆ Ս.

ԱԹՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՒՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Ս. Աթոռիս Միաբանութիւնը նախօսրդ տարւոյ վերջին եօթնեակին մէջ բախտն ունեցաւ Ս. Յակոբայ նուրիրական յարկին տակ լնգունելու վեհ. Տ. Բարգէն Մրբազան Կաթողիկոսը, որ եղիպատոսէն ցամաքի ճամբարդ Պէյրութ վերագանալուն առթիւ հաճած էր պատուել ամէնքս իր չնորհարեր այցելութեամբ: Ն. Մրբութիւնը, ոչ միայն իրրեւ եկեղեցական նուրիրապետութեան բարձրագոյն աստիճանաւոր մը, այլ նաև իրրեւ անձնդիր հոգևորական մը, որ հոգելոյս Դուրեան Մրբազան Պատրիարքի օ-

րով, թերթիս խմբագրապետութեան և ժամանակաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսուցչութեան պաշտօններով արդիւնալից զործունէութիւն մը ունեցած էր այստեղ վեց տարիներ, տմենու ջերմ սիրոյն եւ խօս յարգանքի իրաւունքին տիրացած ըլլալով, ողջունուեցաւ խանդավառ ողեւորութեամբ։

Գահիքէն հեռազրաւ լուր ստոցած ըլլալով թէ Դեկտ. 26 Բ.Հ. ի երեկոյին չողեկառքով վեհէլ մեկնած է զէսի Ս. Պատաքս, յաջորդ առաւոտ կանուխ Լիւդ ընդ առաջ փութացին Տ. Տ. Վ. թանձնու, Դէսորդ, Միոն, Դաւիթ, Պարզե վարդապետներ և Դիւտապետ Պր. Կ. Ներեխան և Բարեգործական Միութեան տեղական ժողովին և Երուսաղէմի հայրենակցական միութեանց կողմէ բազմաթիւ պատուիրակներ հան էին նաեւ Տ. Ներսէս վրդ., Յոսպէի վանուց Տեսուչը, և Տ. Եսայի վրդ.: Ասոնց ամենուն ընկերուկցութեամբ, աւելի քան առան ինքնաշարժներով, Ն. Արքութիւնը ժամը 8.30 ին ժամանեց Երուսաղէմ, ուղղակի վանուց աւագ զրան առջն: Հոս, Ս. Պատրիարքը, Լուսորարապետ Տ. Մեսրոպ, Փօխանորդ Տ. Մկրտիչ և Տնօրէն ժողովի ատենապետ Տ. Ամբատ Արքաղաններու հետ ընդունեց Ս. Կաթողիկոսը յարգալից ողջագուրմամբ, առաջնորդեց զայն ի գլուխ միաբանական թափօրին, որ պատրաստ կը սպասէր ներքին մեծ բակին մէջ, և ինքն ելաւ պատրիարքարան։ Ն. Արքութիւնը հանդիսաւոր «Հրաշափառով մուտ զործեց ի Մայր Տաճար. Երկրպագութեան ուխտը կատարեց և խնկարկեց նախ Ս. Գլւխաղի մատուոին մէջ, մինչ զպիքները կ'երգէին Ռոդուց Ռոտոման շարականը «Որ էնն յէսութեան». յետոյ ներախ լեր Ս. Եկեղեցի» օրհներդութեամբ ուղղուեցաւ մեծ դասի ատեանը, ուր պատշաճ սաղմոսի և ազօթքներու ընթերցումէն վերջ ողջոյնի հակիրճ և սրտապին խօսք ուղղեց Միաբանութեան և ժողովուրդի ներկայ խուռն բազմութեան, եւ «Պահպանիչ» ով օրհնելէ վերջ ամէնքը, նոյն թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքարան: Միաբանութիւնը և աշակերտք այդ միջոցին ցնծողին կ'երգէին կիլիկիոյ երզը. «Երբոք բազմագույն և բարգաւաճ օրերու յաջողութիւններ»։

Ա. Պատրիարքը զարձեալ զիմուորեց Ն. Արքութիւնը, եւ ամէնքը կարգաւ մտան մեծ դահլիճը, որ լուսազարդուած էր հումակ: Ա. Պատրիարքը լարի գոլսահան սրտապին ուղերձ մ'ըրաւ հոն վեհէն, յայտնելով թէ ո'րքան ուրախ էին ամէնքը իր այս հոգեսր այցելութեան առթիւ: Ա. Կոմթողիկոսը պատասխանեց ջերմ սիրոյ բառերով. ըստ թէ ինք եղբայրական պարտականութիւն կը զգար աւելի կանուխ անձամբ զալ և չնորհաւորել Ա. Պատրիարքը իր աթոռին վրայ, ոչ միայն որովհետեւ Ն. Ամենապատուութիւնը հաճած էր ներկայ լինիլ իր ձեռնադրութեանը և իր անձին ու խօսքին հմտյափով աւելցնել չուքը այն հոգեսր հանդէսին, այլ որովհետեւ արժանապէս բարձրացած էր իր և ամենուն մեծ ուսուցչին յաջորդութեան զիրքին, բայց եթէ պարագայից բերմամբ չէր կարողացած ժամանակին կատարել այդ պարտքը, հիմակ ուրախ էր որ կուգար խնդակցիլ իրեն և պատ. Միաբանութեան, մէկ ատարուայ կարճ միջոցին ձեռք բերուած գովելի արդիւնքներուն և Ա. Աթոռոյ ներքին պայծառութեան և տնտեսական ապահովութեան: Գովեց այդ առթիւ ամբողջ Միաբանութեան և յոյց տոււած սրտակից ջանադրութիւնը և համերաշխ ոգին, եւ գնահատանքով յիշեց Վահեմ. Ռսկան Պէյ Մարտիկեանի կողմէ այս առթիւ կատարուած աշխատանքը. «Ես վստահ եմ թէ, աւելցուց, օր մը, ինչ որ աւ ըլլայ, Ա. Յակոբն է որ պիտի գլուխ եւ առաջնորդ կանգնի այն զործին զոր կոչուած է կատարել Հայաստանեաց Եկեղեցին»: Օրհնեց բազմագույն Միաբանութիւնը, բարեմազթելով լոււագոյն և բարգաւաճ օրերու յաջողութիւններ:

Նոյն օրն իսկ, իրիկնադէմին, Ա. Պատրիարքին և Միաբանութեան հետ, փութաց հոգելոյս Դուրեխոն Արքաղանի գերեզմանը, ուր կատարուեցաւ Հոգեհոնդստեան պաշտօն, և անձամբ զրաւ ծաղկեփունջ մը երանաշնորհ ուսուցչապետին զալարազարդ հողակոյտին վրայ:

Յաջորդ երկու օրերը, Դ.Հ. և Ե.Հ., Ն. Արքութիւնը անցուց Ա. Պատրիարքին և Միաբանութեան հետ փոխարէն այցելութեանց և տեսութեանց զրաղումներով:

Արքաթ, 30 Դեկտ., կէսօրէ առաջ

Պատրիարքարանի սրահի զրան առջն

Ս. Պատրիարքին և Սրբազն Եպիսկոպոսաց ընկերակցութեամբ այցելեց Ժառանգաւորաց վարժարանի և սարկաւորաց Ընծայարանի բաժինը. ուր ընդունուեցաւ ջերմ ողերութեամբ և երգերով. Տեսուչ Տիրան վրդ. ի ուղերձին պատասխանելով հայրական խրաժխօսութիւն մ'ըրաւ եկեղեցական սաներու. Յետոյ, սորիկաւորաց դասարանին մէջ նոյնպէս, սրտայցով զգացմամբ խօսեցաւ յորդորական մը, ուրուն ի պատասխան՝ Հրանդ սորիկաւոր, յանուն իր ընկերներուն պատասխանեց որդիական խանդագատանքով: Ժառանգաւորաց վարժարանին առջեւ Ն. Ս. և Ս. Պատրիարքը և բոլոր ներկայ միաբանք, ուսուցիչք և աշակերտաները խմբովին լուսանկարուեցան: Յետոյ այցելեց Թարգմանչաց Նախակրթարանը և Մանկապարտէլը, ուր կը դաստիարակուին աւելի քան չորս հարիւր սաներ, երկու սեռէ, ամէնքն ալ քաղաքացի և գաղթական ազգայնոց զաւակները: Տեսուչ Տ. Կիւրեղ վրդ. ի ուղերձէն և փոքրիկներուն արտասանութենէն և երգերէն ետքը, Ն. Ս. և Ս. Պատրիարքը գոհունակութեամն և սիրոյ խօսքեր ուղղեցին փոքրիկներուն, օրհնելով զանոնք սրտազինս:

Տ. Կաթողիկոսը, Դեկտ. 30ի Աւրբաթերեկոյին, Տ. Մեսրոպ և Տ. Մըրատ Արբազաններու և վեց վարդապետաց առաջնորդութեամբ իջաւ Մայր Տաճար, և նախագահեց Ս. Յակոբ Մծրնայ հայրապետի նորխատօնակին. ձախակողմեան դասի զըլուիը պատրաստուած էր բարձրագիր Գահ Աթոռ մը, ուր բազմեցաւ Ն. Սրբութիւնը:

Յաջորդ օրը, Շր. 31 Դեկտ. ամբողջ միաբանութեամն առաջնորդութեամբ «Հրաշափառ»ով գնաց ի Ս. Յարութիւն և Ս. Գիրեզմանի վրայ երկրպագութեան ուխտակատրելէ և թափորի շրջան մը բոլորելէ վերջ ելաւ մեր Գոզզովայի վերնամատուուը, ուր նախազահեց կիրակամտի ժամերգութեանց: Թէեւ իրաւակից երեք ազգերէն իւրաքանչիւրը տարուան մէջ հինգ անգամ միայն կանոնապէս իրաւունք ունին հանդիսուոր թափօրով մտնելու ի Ս. Յարութիւն, բայց այդ արտօնութիւնը բացառաբար կը չնորհուի ամէն մէկին՝ իր եկեղեցիին պատկանող նոուիրապեսական բարձրագոյն աստիճանուորի մը, պատրի-

արքի կոմ կարտինալի, այցելութեան միջոցին ևս: Աւրախալի է որ Տ. Բարդէն Կաթողիկոսի այս այցին առթիւ, միւս երկու ազգերը ոչ միայն իսկոյն ցոյց տուին ամէն բարեյօժարութիւն, այլ նաև մասնաւոր լուսազարգութեամբ պատռւեցին բարձրաստիճան հիւրը:

Ն. Ս. յաջորդ օրը, Կիրակի, 1 Յունուար, հայրապետուկան շաքով պատարագեց Ս. Յակոբայ տաճարին մէջ, և քարոզեց հզօր չունչով և ինքնայատուկ պիրճակասութեամբ. բնաբան առնելով «Ոչ ոք արկանէ ձեռն զմանով և հայիցի յետան և «Զառ ի յետոյսն մոռացեալ՝ ի յառաջադէմն նկրտիմ» աւետարանական և առաքելական խօսքերը:

Բացատրեց թէ քրիստոնէական կեանքը բարոյական անդուլ յառաջդիմութեան կետնքն է միայն. ձշմարիտ քրիստոնեան, առանց արքենալու անցեալին յաջողութիւններէն կամ վհատելու անոր ձախողանքներէն, պէտք է անդեղե ուղղուի եւ անսայթաք ընթանայ զէպի բարոյական կատարելութեան այն սեւեռակէտը, զոր Աւետարանը կը դնէ իր առջեւ: Բոլոր մեծ և արդիւնալից կեանքները այդ կերպով է որ գոյացած և զարգացած են: Առանց այդ ոգին, անկարելի պիտի ըլլոր ոչ ապրել և ոչ ըմբռնել քրիստոնէական որ և է զործունութիւն:

Երեկոյին, ի պատիւ իրեն՝ միաբանական սեղանին մէջ կատարուեցաւ ընդհանուր ըրթըրիք, որու միջոցին նախ Ս. Պատրիարքը և յետոյ ինքը, Ս. Կաթողիկոսը իրենց տպաւորիչ և սիրուն սփիչներովը ուղերցին ամէնքը, մին ասիրոյ ճաշոյին խօրհուրդը մատնանշելով անոր մէջ, եւ միւսը ածառայութեան սեղանին պատկերը նկատելով զայն: Երկուքն ալ խօսեցան զգածուած հոգւով, երկուքն ալ սպեկուչեցին այս Տան ծառայութեան, և անոր միջոցաւ Ազգին ու Եկեղեցին ծառայութեան մէջ անուն և արգիւնք ունեցող զէմքերը, մինչեւ անոնց ամէնէն վերջինը, իրենց ամենասիրելի և անմոռանալի Հայրը և ուսուցչապետը: Ամէնքը երգեցին նախ Ս. Աթոռոյ շարականը և ի վերջոյ իիմիկիոյ երգը:

Բշ., 2 Յուն., Վեհը, Ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ Արբազանի գնաց Բեթ-

զեհէմ, և հանդիսաւոր թափորով ուխտ կատարեց Փրկչին Ծննդեան այրին վրայ:

Պարտաւորուած ըլլալով Ս. Ծննդեան տօնէն առաջ գտնուիլ իր պաշտօնաեղին, վեհ. Տ. Բարգէն Ս. Կաթողիկոս Յունուարի 4ին, Դշ. առաւօտեան կանուխ մեկնեցաւ դէպի Պէյրութ, իր հետ ունենալով Տ. Նորայր վրդ. ը: Ն. Ս. Մոյր Տաճարին մէջ նախ իր ուխտն ըրաւ Գլխադրի մասուոին մէջ, ուր «Տէք ուղղեա՞ի ճանապարհորդական կարգ մը եւս կատարուեցաւ, յետոյ, Աւագ Խորանի տոշն ևս ազօթելէ վերջ, ամբողջ Միարանութեան եւ աշակերտաց թափորով առաջնորդուեցաւ վանքի աւագ դուռը, ուր օրհնելէ վերջ ամէնքը, որոնք ողջերթի իրենց աջամբոյքը կը մատուցանէին, ճամբայ ելու ամէնուն սրտազգաց մէծարանքներուն մէջ:

### ՎԱՐՉԱԿԱՆ, ԺՈՂՈՎԱԿԱՆ

#### ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ

Ս. Աթոռույս Տնօրէն ժողովը անցեալ Դնկու. ամսոյ ընթացքին ուիթ անդամ գումարուեցաւ իրը Վարչական Մարմին և զրադեցաւ կարգապահական և մատակարարական գործերու կարգադրութեամբ, տնօրինութիւններ կատարեց կալուածական Նորոգութեանց, մէտերանոցներու շինութեան առթիւ տեղուոյն քաղաքապետութեան հետ համաձայնութեան, Յոտպէի վերջերս հըրկիզուած փոքրիկ մէկ կալուածին անյաօպար վերացինութեան, և Ս. Քաղաքին մէջ կառուցուող յարկարագիններու մասին շինուածական ճշշգումներու խնդիրներով. տնօրինութիւններ կատարեց Վեհ. Բարգէն Ս. Կաթողիկոսի ընդունելութեան արարողութեանց վերաբերմամբ, եւ քննելէ վերջ երկից դասալիք Աւետիս Սարկաւագ Անուրուեանի հարցը, կարգալոյն հոչակելով խապա վտարեց զայն եկեղեցական ասպարէցէն: Իսկ իր կրօն, ատեան չորս անդամ՝ նիս ընելով՝ տնօրինութիւններ կատարեց ընտանեկան, ամուսնական հարցերու մասին:

❶ Դնկու. 15. եւ. և 20 ի գ. օրերը երկիցս նիստ անցեցաւ Միարանական Ընդհ. ժողովը, և զրադեցաւ վաճառելի կալուածներու վերաբերմամբ այդ առթիւ նախապէս կազմուած Ցանձնաժողովին տեղեկագրին և Պատրիարքարանի գործոց մասին Տնօրէն ժողովին բերուած առաջարկին նկատառումով և իր վերջնական որոշումները տալով այդ մասին, անոնց գործադրութիւնը յանձնեց Տնօրէն ժողովին:

Զրադեցաւ նաև Տ. Նորայր Վարդապետի Տնօրէն ժողովէ հրաժարականով, զոր մերժեց, և վճռեց անոր հաստատումը՝ օրինապէս իրեն յանձնուած պաշտօնին մէջ:

Այս վերջին նիստին մէջ, ուր ներկայ էր նաև Աթոռութիւն Պէյրութիւնը, Ս. Պատրիարքը ծանուցանելով ժողովին թէ քանի մը օրէն պիտի մեկնի ն. Վասեմութիւնը, իր և Միարանութեան անսահման գոհունակութիւնը յայտնեց հրազարակաւ անոր կատարած ութամսեայ անխոնջ եւ արգիւնալից ծառայութեանց համար յօդուտ Ս. Աթոռութ. յոյժ զնահատական բառերով գովիտոն ըրաւ անոր ազգասիրական լուրջ նկարագրին, և սիրոզարար աւելցուց թէ անոր մեկնումը ինըը կը նկատէ ձմեռային արձակութիւնը մը միայն, և յոյս յայտնեց թէ յառաջիկայ գարունին, ճիշտ ամէնակներու գարձէն ալ առաջ վերստին մեր մէջ պիտի ողջունենք զինքը, իր շարունակումին մզելու համար այնքան յանդղապէս սկսած իր գործը Այս մտօք և նոյնքան սիրայիր բառերով արտայայտուեցան նաև Տնօրէն ժողովի ատենապետ Տ. Սմբատ Սրբազն և Քնդէն. Ժողովի ատենապետ Տ. Սիօն Վարդապետ, որ յաւարտ իր խօսքերուն հրաւիրեց ժողովը յայտնել Ս. Յակոբայ բարեկամ Բարեկարին: Ն. Վասեմութիւնը, յայտնապէս զգածուած՝ Միարանութեան և իր Սրբազն Գետին այս վերաբերմունքէն, չնորհակալութեան գեղեցիկ ուղերձ մը ըրաւ. բարձըրուէն գովից Միարանութեան համերաշխ ողին և անտրտունջ այն կիցուածքը, որով ինչպէս նախանձախնդիր եղած է ան միշտ Ս. Տեղեաց ազգային իրաւանց պահպանութեան, նոյնպէս և այժմ հագածու կը լինի անոր տնտեսական վերականգնումին՝ ի գին ծանր զոհուութեանց: Վերջուծական ակնարկով մը անդրադարձաւ ի վազուց անտի եղած պարտքի գոյաւորման եւ բարձման վիճակներուն, և յատակամիտ ըմբը նումով մատնանիշ ըրաւ այդ վերքին ընդմիշտ րուժման զարմանը: Վատահութիւնը յայտնեց թէ եղուծ կարգազրութիւնները արմատական պիտի լինին Ս. Պատրիարքին և Պատ. Միարանութեան անդեղեւ ջանազրութեանց չնորհէւ. ըսաւ, ի վերջոյ, թէ իր սիրու Հայ-Երուսաղէմի հետ է միշտ, որմէ մարմնով միայն կը բաժնուի և առժամարար: Կայլին:

Այս վերջին յայտարարութեան վրայ, Ս. Պատրիարքը իջաւ իր Աթոռէն, և, ամէնուն սրտաւթին յուղման առջեւ, համբուրեց ն. Վասեմութեան ճակատը, մինչ նա յարգանքով կը խոնարհէր ի Ս. Աջ ն. Ամենապատուութեան:

Պատրիարքարանի միծ դահլիճին ջահազարդ կամարները քիչ անգամ լիցուած էին բերկրանքի այն անոց մինուորտովը: զոր կը պարզէր այդ յիշատակելի պահը: Ս. Յակոբեանց գարաւոր այս նուրբական Տունը հպարտ է Ոսկան Պէյրատիկեանի մաքուր բարեկամութեամբը, եւ կ'ըզայ միայն որ ն. Վասեմութիւն ևս երջանիկ լինի իր հան սկսած գործին լիուլի արգիւնաւորմովը:

❷ Եշ. 1 Դնկու. — Ն. Ամենապատուութեան պատրիարքարան պաշտօնավարութեան առաջին տարին կը լրանար այսօր: Հակառակ որ ինքը

արգիւած էր այս առթիւ եկեղեցական, ժողովական և կոչունքի որ և է հանդիսականարութիւնն, երեկոյին՝ ամրողջ Միաբանութիւնը եւ աշակերտութիւնը յանակնկայս հաւաքուեցան պատրիարքարանի մեծ դահիճին մէջ, իրենց շնորհաւորութիւնները եւ բարեմազթանքը ներկայացնելու համար գէթ առտնին մտերմութեան պարզ ձեռի մը Պատրիարքուած՝ չմերժելու ըզդացումներու այս սրտափին արտայայտութիւնը, Շ. Պատրիարքը մտաւ զահիճը. Տնօրէն ժողովոյ ատենապետ Տ. Միքայել Սրբազն սրտաբուխ ուղերձով մը ամէնուն շնորհաւորութիւնն ու բարեմազթանքները ներկայացուց, որուն ի պատասխան Ա. Պատրիարքը մտայց իր ջերմ շնորհակալութիւնը, ԵՄԵր կը պայտութեան դրսութիւնը կը օնական հասարակապետութեան կեանք մըն է, ըստ, և իմ ըրածը ոչ թէ իշխանութիւն՝ այլ առաջնորդութիւն մըն է միայն. ինչ որ յարդիւնս եկաւ այս առաջին տարիին մէջ խսկ, ամերողջ միաբանութեան համեմաշին սգիին գործն է միայն, պէտք է տեկ այդ սգին, որպէսզի իրապէս փառաւորուի այս Տունը կանգուն պահող այն սկզբունքը որ Ազգին եւ Եկեղեցին զոյդ գաղափարներու միաւորհալ կեանքն է սույն: Աշակերտուները երգեցին ն. Ամենապատութեան ձօնուած երգը եւ ինքը օրհնութեամբ վերջ տուաւ այս գումարումին:

❶ Ուր. 2 Դեկտ. — Ա. Պատրիարքը, ընկերացութեամբ Տ. Դաւիթ վրդ. և դիւտանապետ Պ. Նորեհանի, երկօրինայ օգագիութեան մը համար մեկնեցաւ Յոսպէկ. ուղղակի զնաց թէլ-Ավիտի քիմիաբանական աշխատանոցը, տեղեկանալու համար հոն վրկուած շինուածաքարերու քննութեան արդիւնքին. գիշերեց Ցողպէկի մեր վանքը. յաջորդ օրը այցելեց տեղույն աղդային վարժարանի քաղաքի քաղաքաց տեղույն աղդային վանքը. կիրակի քարոզեց տեղույն Ա. նիկողայոս եկեղեցւոյն մէջ, ուր ամրողջ ժամերգութեան եւ Ա. Պատարագի միջոցին ներկայ գտնուեցաւ Ղաղթներու երուսաղէմի եպիսկոպոսը, Տ. Վասիլիոս Սրբազն, իր կղերին հետ ԲՀ. վերադարձաւ Երուսաղէմի:

❷ Դշ. 7 Դեկտ. — Ստացուեցաւ լուսանկարչութեան բազմագրութեան գործիքը, որը Բարեգործական Ընդհ. Միութեան Բարիզի կեդրունը, իրեն եղած յանձնաբարութեան վրայ, որամազդրած էր մեզ, Ա. Ալուսոյ ճեռագրատան մէջ եղած կարգ մը հայ գաւառաբարբառներու բառաբաններուն պատճէնները արամազդելու համար բանասէր Պ. Հը. Աճառեանի, որ այս միջոցին կը պատրաստէ ընդհ. հայ գաւառաբարբառներու մեծ բառաբան մը:

❸ Ուր. 8 Դեկտ. — Ամերիկան Փոխ Հիւարտառու Մը. Պէէջօրտ այցելեց Ա. Պատրիարք Հօր:

❹ Կիր. 11 Դեկտ. — Ա. Պատրիարքը և Ասկան Գէ, Տ. Տրդատ և Տ. Եղիշէ արդգայթեաներու հետ գացին Քերրոն եւ վերադարձան երեկոյին:

— իր մօտաւուտ մեկնումին առթիւ, այս երեկոյիան ընթրիքը պատուոյ սկզանի էր վե-

րածուած ի մեծարանս Անկան Պէյ: Ներկայ էին բոլոր միաբանութիւնը եւ աշակերտութիւնը. իսունցաւ նախ Ա. Պատրիարքը, որ թռւելով ն. վահմութեան ծառայութիւնները, ի մէջ այլոց բառաւ. և Օգնեց նա մեզի իր աղանդութը. այդ բարը կրկին իմաստ ունի շատ մը լեզուներու և մերին մէջ, իմացական եւ նիւթական. Ուկան Պէյի վրա մենք զայն հոռ տեսանք առաջ չին նշանակութեամբը մանաւանդ, մենք օգտեցանք իր միտքէն, զոր բարութեամբ ի սպադակա անիկա այս հաստատութեան, տուաւ մեզի իր միտքին սոկին. առաքելական այն իսունքին համեմատ թէ արծաթ և սոկի ոչ ունիմ, այլ զոր ունիմ տացյա, ու տուաւ մեզի իր մատուրական հարստութենէն որ լաւագոյն կերպով կը մոխարկուի նաեւ նիւթականի, երբ տուողը դիտէ աղնուութեամբ տալ զայն, եւ ընդունողը աղնուութեամբ ընդունիլ: Ալո՞ր համար է որ իր իմացական տաղանդին տուրքը շուտով մոխարկուեցաւ մեր մէջ նիւթական տաղանդի պտուղին, քանի որ իր շնորհիւ կազմակերպուած պիտանէին միջոցաւ, մինչև մեր ելմը-ամական տարեգորունը, պիտի շահաբերուած ըլլայ աւելի քան 500 սոկոյ խնայողութեան օգուտ մը, յօգուտ մեր տնտեսական դրսութեան եւ ահա անո՞ր համար է որ իր բարեկամի համեստ դիրքին մէջ իսկ բարեկամի մը արժանիքովը կը մնենի մեր մօտէնչա Ազա խօսեցան նաև Տ. Մկրտչի և Տ. Ամբարտ Սրբազն սրբը, առաջինը՝ Ա. Ալուսոյ անցեալին պատմական օրինակներով, երկրորդը ներկայի իրական փաստերով: Աշակերտուներ երգեցին, իսկ ամէնուն պատասխանեց Ուկան Պէյ, չերմ շնորհակալութեան եւ փորձառական թելագրութեանց խորհրդածութիւններով:

❺ Դշ. 14 Դեկտ. — Ի դիմաց Ա. Պատրիարք Հօր, կայարան գացին թարգման Տ. Պարգև վրդ. և քարտուղար Պ. Կարապետ Հինդիւեան՝ յուղարկ Գերմանիոյ Ընդհ. Հիւարտառու Պ. Նորդի, որ Սիամի մայրաքաղաքը կը մեկնէր պաշտօնի բարձրացումով:

❻ Ուր. 15 Դեկտ. — Լուր առնօւեցաւ թէ Յոպէկ պատահած բաւական մեծ հրդեհէ մը աղզուած է նաև վանուցս կալուածներէն մին, շուրջ 100 սոկի արժազութեամբ վաստով մը:

❼ Ուր. 16 Դեկտ. Դիւտանապետ Պ. Կ. Նուրբեան Տնօրէն ֆողովոյ կողմէ Յոպէկ գնաց հրդեհի մեր վասին եւ կալուածնեական ուրիշ գործերու քննութեան համար:

❽ Դշ. 20 Դեկտ. — Ա. Պատրիարքը եւ Տ. Միքայել Սրբազն, Դիւտանապետ Պ. Կ. Նուրբեանի համար նիւթեամբն է գործուած կամաց կամաց մը:

❾ Դշ. 21 Դեկտ. — Ասկան Պէյ Մարտիկեան մեկնեցաւ Եդիապոսու: Ա. Պատրիարքը եւ Սրբազն նովիսկոպոսները առաւօտուն ողջերթի այցելութիւն տուին իր բնակած յարկարագիւնին մէջ: Աւագ դրան առջև բովանդակ միաբանութիւնը և պաշտօնէութիւնը և ժառանգաւոր և Ա. Թարգմանչաց վարժարանի սաները ողջեր-

թի պատիւները ընծայեցին ն. վասնութեան, որ ձամբայ ելաւ ամէնուն խանդավառ ձափողէոյն-ներուն մէջ։ Մինչեւ կիւդ իրեն ընկերացան Տ. Մուշեղ և Տ. Դաւիթի գարդապետներ։

● Նոյն օրը, Ս. Պատրիարքը եւ Տ. Միհրոսպ և Տ. Միհրան Մրրազաններ նրբեազ գացին ի տես Տ. Մատթէոս Մրրազանի, որ առաջական պատ-ձառաւ հոն փոխադրուած է ատենէ մը ի վեց։

● Եշ. 22 Դեկտ. — Ընօրհակալութեամբ ըս-տացուեցաւ Ս. Աթոռոյ Հնդկանայ բարերարնե-րէն Գ. Պետրոս Կրէսի իւղանկար մնձ կենդանա-գիրը, որ զետեղուեցաւ պատուայ դաշիճին մէջ, ազնուատոնմ լազարեան բարերարներու կար-դիւ։

● Եր. 24 Դեկտ. — Լատինական Ծնունդի տօնին առթիւ, թարգման Տ. Պարգև, Տ. Դա-ւիթ, Տ. Գեղամ վարդապետներ և գիււնապետ Գ. Նուրեան, ըստ սովորութեան Բնիթղենէմ գա-ցին, իրաւակիցական հսկորութեան համար։

— Տ. Տիրան վրդ. մեկնեցաւ Յոսպէ, տեղ-ւոյն Ս. Նիորդացոս եկիցեցաւ տօնին առթիւ պատարագիրու և քարոզիլու համար։

● Եշ. 26 Դեկտ. — Լատինական Ծնունդի տօնին առթիւ, Ս. Պատրիարքը, ըստ սովորու-թեան, Մրրազան եպիսկոպոսաց և վարդապետ-ներու ընկերակցութեամբ հանդիսական թափորով այցելութեան զնաց Ֆրանչուկեան միաբանու-թեան, Լատինաց պատրիարքարանը և Անկի-քան եպիսկոպոսին, եւ ընդունուեցաւ սիրամիր մնձարանքով։

● Աւր. 30 Դեկտ. — Ի բացակայութեան Ղատիններու եպիսկոպոսին, իր փոխանորդը եւ վարդապետ մը այցելեցին Ս. Պատրիարքին։

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ

Եր. 3 Դեկտ. — Ս. Կուտին Ծնծայման տօնին առթիւ, կիրակամուտի ժամերգութիւնը եւ նախա-տօնակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց տաճարին մէջ հանդիսականութեամբ Տ. Միհրոսպ Մրրազանի։

● Կիր. 4 Դեկտ. — Յաջորդ օրը Միհրանու-թիւնը զնաց Գեթսեմանի եւ «Հրաշափառ»ի թափո-րէն վերջ Տ. Միհրոսպ Մրրազան հանդիսի պատա-րափեց նոյն սրբավայրին մէջ, եւ բարողից նիւթ ունենալով օրուան տօնին զաղափարը. բացատրեց թէ ծնողըները ո՞քափ սուրբ պարականութիւն մը կաարած կ'ըլլան իրենց զաւակներուն սրբին մէջ, անոնց մատադ հասակէն, տպաւորելով Աստուծոյ սէրը, եւ այսպէս կանուխէն պատրաստելով զանոնը իրենց ամբողջ կեանը ընծայելու աստուածանուէր կոչումի մը։

● Կիր. 11 Դեկտ. — Ս. Պատրիարքը մատուց-ուեցաւ Ս. Յարութեան տաճարի Հայկական Գոլգո-թայի վերնամասատուանին մէջ. ժամարարն էր Տ. Նո-րայր վարդապետ. բարողեց Տ. Դաւիթ վրդ., միա-բան առնելով Աւետարանի օրուան ընթերցուածէն առնելով իր նիւթը, իսուհցաւ խոնարհութեան առարինութեան վը-րայ. բացատրեց թէ սրբի եւ մտքի նշմարիտ բար-ձրութիւնն է միայն որ իրապէս խոնարհ կ'ընէ մար-դը իր կեանը մէջ. հին եւ նոր դէմքերու օրինա-կովը զեղեցիկ կերպով հաստատեց այս սկզբունքը։

բուստը ան է որ զինու բարոյական նպատակներու արդիւնաւորման միջոց դարձնել իր նիւթական կա-րգութիւնը։

● Եշ. 15 Դեկտ. — Ս. Պատրիարքը բահանա-յարար պատարազեց Ս. Աստուածածնի Գերեզմանին վրայ, ի Գեթսեմանի, իր ծնողացը և հանգուցեալ ընտանեկան պարազայից հոգւոցն հանգստեան հա-մար. իր Միրվարդ բրոց մահուան երկրորդ տարելի-ցին առթիւ։

● Եր. 17 Դեկտ. — Հանդիսիւ կատարուեցաւ տօնախմբութիւնը Առաջին լուսաւորչաց. Թաղէոս եւ Բարթողիմէոս առարիաններու. Ս. Պատրիարքը եւ Միհրանութիւնը շնորհաւորական այցելութեամբ պատուեցին ծերունի ճայրինասէր Ֆանուզցի Տ. Բար-թողիմէոս վրդ. որ տարիներէ ի վեր հիւրաբար աստ կը զանուի։

● Կիր. 18 Դեկտ. — Ս. Յակոբայ տաճարին մէջ պատարազեց Տ. Քէորդ վրդ. բարողեց Տ. Կարեզին վրդ. նիւթ առնելով Աւետարանի օրուան ընթեր-ցուածէն վերցուեց անպատու թղթնին առակի. բացատրեց թէ Խախանամութիւնը ինչ ճարշապի պատահութիւններ տրամադրած է մարդուն իր կեան-ը նոզի որայէս արդիւնաւորիւն համար Աստուծոյ թագաւորութեան դաշտին մէջ, եւ յիտոյ անդրա-դառնալով Սիյովամի աշաբարակի արկածին զոհ զա-ցածներու պատահարին՝ մասնանշեց թէ բրիսու-նեան կեանը մէկ դէպէն պէտք է աս-տուածային ազգաբարութեան իրատ մը կամ զաս մը զիսնայ քաղել։

● Կիր. 25 Դեկտ. — Ս. Պատրիարքը մատուցուե-ցաւ Հրեշտակապսաց տաճարին մէջ. ժամարարն էր Տ. Կիրերի վրդ. բարողեց Տ. Միհրոսպ վրդ., որ Աւետարանի օրուան ընթերցուածէն առնելով իր նիւ-թը, իսուհցաւ խոնարհութեան առարինութեան վը-րայ. բացատրեց թէ սրբի եւ մտքի նշմարիտ բար-ձրութիւնն է միայն որ իրապէս խոնարհ կ'ընէ մար-դը իր կեանը մէջ. հին եւ նոր դէմքերու օրինա-կովը զեղեցիկ կերպով հաստատեց այս սկզբունքը։

### ՆՈՒԻ ԻՐԱՍՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ենորհակալու թեամբ կ'արձանագրենց նետենայ նուէները։

### ԶԵՆԱՊՐՈՎ ՄԱՏԵԲԱՊՐՈՎՆԵՐ

Բարեկապտանի Տիկին Մարի Հ. Կիրիւնեան Պա-նիւթը՝ ի յիշատակ իր հանգուցեալ ծնողաց նուիւց դպտէն մէկ զշամի Օ. Նորամատեան, ձեռակը իր տաներցին։ Աւճ. Տէ Պակ Քնն. Մ. Խաչիկեանի։

### Բարեկապտական

Ետէնիրն Միրիի Հայոց Հոգիւր նովիւ Հոգ. Տ. Մամրէ. Շ. Վ. Պ. Պալեմետանի միջոցաւ Ս. Արոն զր-կուած են նետենայ բարեկապտական նուէները. Պր. Պանինի Աւետարանի 5 տուար, Տիկ. Պայծառ Մկրե-շիշեանի 10 տուար, Տիկ. Փետր Զարսամանան 10 տ., Տիկ. Հ. Աննա Զարսամանան 5 տ., Տիկ. Աննա Բատեան 10 տ., Տիկ. Աննա Բատեան 1 տ., գումար 46 տուար. — Նոյնպէս Ա-ղեսանգրիատէն Տիկ. Պարեւտանի Պ. Ճշնեան 1 եղ. ուսիի, եւ Լիմայէն (Եւեռ) Պր. Պ. Ճշնեան 0,50 տ.